

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մարտ 18

Թիւ 87 — ԺԳ

هائراکيداق غزوة سی

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Զր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դիմեմք ու դիպեմք
Կնոջ արցունքը
Տես՝ եւ գործ. Մանկավարժութիւն
Կորսուած էջեր (Չայնեակ)
Իմ հանդիս (Էրբուած)
Իսկային հասած (Վիպակ)
Լեզու՛ն... (Թեղիկին)
Ջաւկին սերը (Նորավեպ)
Ազգագրական (Ակնայ սովորութիւններ)
Քիչ մը խնդուք

Բ. Պ.
Թէոդ. ԻԿ
Մ.
Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Ա. Լ.
Ս. ԲԱԲԷԼԵԱՆ
Վ. Փ.
Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Գասրգիւղ, Արմեն ԷՖ. Չպուզեանի Դեղարանը. — 2. Սա-
մաքիա, Կայարանին մօտ, ծխավանառ Յարութիւն Աղա Էժէսէհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օգուստինի ֆոյ (Նախկին ջրավանառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավանառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց,
Աւենան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոլոր յազրավանառներուն ֆոյ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Էսկի Ջապսիէ հասցէի Թիւ 61

1900

ԿԱՐԵԽՈՐ

Անոնք որ կը փափաքին նպաստաւոր
ու շահաւէտ պայմաններով հողագործ
ծութիւն ընել պէտք է փութան իրենց
ամեն տեսակ մշակութեանց մէջ ար-
հեստական աղբերու կամ հանքային
պարարտեցուցիչներու գործածութիւ-
նը ի կիր առնել որ կենդանական աղ-
բէն աւելի խնայողական ըլլալով հան-
դերձ աւելի արդիւնաբեր են :

Առանց պարարտեցուցիչներու մշա-
թութիւն մը էջ նմանի առանց իւղի
կանթեղի մը :

Հնդհանուր մթերանոց

Խ. ՆԱՇԻՏ

Քիւչիւք Պարնաթան խան Կ. Պոլիս .
Ուր ձրի կը տրուին ամէն ծանո-
թութիւնք և տեղեկութիւնք :

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ու շարունակելով գործարանի մարքային



Որ կը մրցի բոլոր կարի մե-
քեաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ


ՅՈՎ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Քէօրիւլի
խան, թիւ 3 :

Մասնաճիւղ. — Ղալաթիա, Պէօլիւք Միւ-
լէթ խան, թիւ 33 :

Գնորդներու համար վճարման ամէն տե-
ւասի դիւրութիւններ :

Ա ՄԵՐԻԿԱՆ ԹԵՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՐԻԿԱՆ ԶՈՒ ՄԹԵՐԻԿ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ հափաւոր գին

Պահե՛ գարու, ճէլալ պէյ խանի ակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն, որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք
մը գրաւած է, և ամէն տարի չի զլանար իր
թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց :

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չզրդ-
ջաք : — Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք :

ՀԱՅԱՐ ԵՒ ՄԵԿ ԾԱՂԻԿ

ՀՆՏԱՎԱՋԱՌԱՆՈՑ

Կ. Պոլիս, Զօրագծի խանի դէմ Քիւչիւք
Պարնաթան խան Թիւ 10

Ձեր հաճոյքի համար ընելիք մշա-
կութեանց մէջ Լ. թէ յաւասար և վրայ
տալ չէք ուզեր ձեր գրամի ու աշխա-
տութիւնը, դիմեցէ՛ք վերոյիշեալ հետա-
վաճառանոցը ուր կը ծախուին երկրի
կլիմային յարմար ճշմարտապէս գե-
ղեցիկ ծաղիկներու եւ համեղ ու ար-
դիւնաշատ բանջարեղէններու հուն-
տեր, որոնց խկութիւնն ու թար-
մութիւնն երաշխաւորեալ է :

Խիստ դիւրամասշտի գիներ

Սոյն վաճառատան մէջ կը ծախուին
նաեւ ամէն տեսակ մշտկութեանց հա-
մար մասնաւոր զուտ քիմիական աղբեր :

ԿԱՐԵԽՈՐ ԱԶԴ

Հանրադիտակի Տնօրէնութիւնը կրնայ
հայթայթել բոլոր վարժարաններու պէտք
ունեցած դասագիրքերը, եղած յանձնարա-
րութեանց ճիշդ համաձայն : Ամէնէն մեծ
գեղըն կուտայ, առանց ո եւ ե օանու ակն-
կալութեան : Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք .
— Միտ կանխիկ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏԵՐԵՆ


ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

Խմբ. 18

Թիւ 84 — Ե.Գ.

ԴԵՍՔԵՐ ՈՒ ԴԵՊԵՐ



Վ. փոքրիկ մասնիկներ, ո՛րքան մեծ ու տարօրէն դերեր կը խաղաք նիւթական որպէս բարոյական աշխարհի մէջ: Եթէ այսօր բնագէտներն հիւլէներու, մասնիկներու անդիմադրելի զօրութեան կը վերագրեն նիւթական աշխարհի գոյութիւնը, եթէ բժիշկները մանրէներու գոյութեան կուտան մեծ ու պզտիկ բոլոր ախտերու ծնունդը, բարոյախօսներն ալ ինչո՞ւ մասնիկներու գոյութեան չվերագրեն այն բոլոր բարոյական ախտերն, որք այսօր իրական ախտերէն լաւելի վարակած են մարդկային ընկերութիւնը: Լեզուի մէջ դառնում առ չարաճճի մասնիկները, — ալ, ուկ, իկ — ո՛րքան խոր իմաստ կը փոխեն անուններուն ու բառերուն իմաստը: Ակը, գէմքին առջեւ իյ-

նալով, իսկոյն տարօրինապէս կը փոխեն անոր էութիւնը եւ կը չինէ դիմանել. ալը իմաստը կ'անձնափոխէ իմաստակի. ուկը մարդէն առաջ անցնելով, կը յօրինէ մարդուկը: Հիմա գէմքերէ ու մարդերէ աւելի դիմակներ ու մարդուկներ կան: Դիմակաւոր մարդուկ մը չէ՞ այն որ առաւօտուն տունդ կուգայ, դքեզ իրնոր գնած տունը կը հրաւիրէ շատ շողմիչ խօսքերով, եւ երեկոյին կ'երթայ կը չարախօսէ վրադ հոն ուր կ'սպասէր քեզ պաշտօն մը, զոր մերժած էիր սակայն մատուցանել մարդուկին: Դիմակաւոր մարդուկ մը չէ՞ այն որ էմնափական չարամիտ նկատումներով խանութպանի մը գլխուն բերուած գժբախտութիւն մը, օրինակի համար սնանկութիւնը, անոր գրագրին հիւզապանութեան կը վերագրէ: Դիմակաւոր մարդուկ մը չէ՞ այն որ իր մէկ բարեկամին սիրոյն համար, ամբողջ ընտանիքներու ապագան կը փչրէ, բարեգործական էն լաւ ըմբռնուած ձեռնարկի մը մէջ անձնական շահեր կը տեսնէ ու կը չարախօսէ: Ողորմելի մարդուկ մը չէ՞ այն որ ամէն պզտիկ տոխթէ օգուտ կը քաղէ իր խուլ հալածանքն յառաջ

միջերու, եւ երբ ձեռնոցը երեւին կը նետես եւ ձայնատուր կ'ըլլաս յասպարէզ դալու, կը սմբի, կը սքլի եւ համարձակութիւն չունենար ձեռնոցը վերցնելու: Այսպիսի դիմակաւոր մարդուկներ շատ ունինք հիմա, որոնցմէ ոմանք ալ այս օրերս Հիւանդանոցն ու անոր Որբանոցը նորէն խնդրոյ նիւթ ըրած են:

Մարդ առաջին ակնարկով կրնայ ըմբռնել թէ աղոնց դրածներն աւելի անձնական նկատումներէ ներշնչուած են, քանի որ վստահ ենք թէ ո՛չ Հիւանդանոց ու Որբանոց այցելած են եւ ո՛չ ալ մօտէն տեղեկութիւն քաղած: Ի՞նչ զարմանալին սա է որ նպաստից Յանձնաժողովն ալ, գաւառական որբախնամ գործը կարծես ի գլուխ հանած, կ'երազէ իր հոգածութիւնը տարածել Հիւանդանոցի Որբանոցին վրայ ալ: Եւ 15 օրէն խորհրդակցութիւն մը պիտի ունենայ եղեր Հոգաբարձութեան հետ. այս պայմանաժամն ի՞նք որոշեր է եթէ ոչ Հոգաբարձութիւնը, չենք գիտեր, բայց սա գիտենք թէ Պատ. Հոգաբարձութիւնն արդէն չորս տեսակ արհեստներ կը սովորեցնէ որբերուն, կարող վարիչներու հսկողութեան տակ: Միւս կողմէ, Որբանոցի կարող ուսանողներէն բաւական տղայք արդէն պետական վարժարաններն ու կեդրոնականը կը յաճախեն եւ գիշերները Հիւանդանոց կամ Որբանոց կը վերադառնան: Մեր կարծեօք, ոմանց առաջարկածին պէս, որբերն այս կամ այն վարպետին քով աշխերտութեան դնելէ աւելի լաւ է նոյն ինքն որբանոցը կատարեալ արհեստանոցի մը վերածել: Արդէն փորձով տեսնուեցաւ թէ այդ բազմակարօտ Հաստատութեան ո՛րքան օգտակար եղաւ կօշիակարութեան արհեստը, զոր բաւական թուով որբեր կը մշակեն եւ Հիւանդանոցի 1000է աւելի պատասպարեալներուն կօշիկները կը շինեն, դուր-

սէն եւս յանձնարարութիւններ ընդունելով: Միւս երեք արհեստներն են դերձակութիւն, կահագործութիւն եւ ստայնանկութիւն: Այս արհեստներուն համար յատուկ շէնք մ'ալ չ'ինուած է, ուր 30—40 որբեր արդէն սկսած են արհեստ սովորել: Ասկէ զատ որբերն օրուան մէջ մէկ քանի ժամ եւս ուսման կը պարտապին, ինչ որ անհրաժեշտ է անոնց մտաւոր վարդապետան: Որբանոցին ներկայ վիճակը, առանց բոլորովին նախանձելի ըլլալու, — քանի որ լաւէն առաջ լաւագոյնը կայ — քիչ շատ դժուարացիչ է, զի հիմա որբերը ֆիզիքապէս աւելի խնամք կը վայելեն, եւ տրուած խնամոտ դաստիարակութեան արդիւնքներն ալ սկըսած են երեւիլ: Դեռ չէ մոռցուած թէ Որբանոցին սաները, նոր տարւոյ առթիւ, բարեպաշտ Տիկինէ մը իրենց ընդունած Յական դըշի նուէրը ուղղակի Ս. Պատրիարք Հօր զրկած էին, իրենցմէ աւելի կարօտ որբերու նպաստելու նպատակաւ: Դրամի երես չտեսնող այս որբերէն այս քան բարեգործութիւն, իրաւքնէ չտեսնուած ու չսուած բան է: Նոյնպէս Արմաշի որբերուն համար ալ 30—40 զոյգ կօշիկ նուիրած էին իրենց շարքաթական քանի մը փարաները խնայելով: Ասոնք ի՞նչ են, ո՛չ ապաքէն բարոյական լաւ դաստիարակութեան մը արդիւնք:

Բայց ի՞նչ է օրաթերթերու մէջ ցրցընուած լուրերու տակ սքօղուած թագուն խորհուրդը, պիտի հարցնէք անշուշտ: Ատիկա հասկնալու համար, քիչ մը աչքէ անցուցէք նպաստից Յանձնաժողովոյ եւ Ազգ. Հիւանդանոցի Որբանոցին խնամակալութեան անդամաց անունները, եւ գիւրաւ պիտի գտնէք պատճառը:

Բ. Պ.

ԾԱՂԻՆ հայաքերթն, որ գրեթէ երկու ամսէ ի վեր դադարման դատապարտուած էր, Բաղդադոյն հրամանաւ վերսկսաւ իր հրատարակութիւնը: **ԾԱՂԻՆ**ի այս վերաբացումը ցնծութեամբ կ'ողջունենք, ամէն յաջողութիւն մտաբերով անոր հրատարակիչներուն, որք զիջեցան, սուղ ժամանակի մէջ, այնքան սիրելի քննալի իրենց քերթը ընթերցասէր ժողովուրդին:

ԿՆՈՋ ԱՐԾՈՒՆՔԸ

Ա.



ՐԱՅՈՅՑ մըն էր ձեռքս անցածը, հին, դեղնած օրացոյց մը, գիրքերու բեռին տակ կաշմը քայքայուն, էջերուն վրայ կրեւով ցեցի խոտոր փորագրութիւններ:

Ուսկից ուր գրադարանիս խորշը նետուած, տարիքով ինձմէ մեծ, երբ քովը ցաւագին հակադրութեան մը պէս կը կենային նոր կողքով, նոր թուականներով ուրիշներ:

Զղջացի թղթատած ըլլալուս, որովհետեւ տարապայման խոստովանութիւն մըն էր որ ըրաւ ան իմ մատղաշ սիրտիս: Յաւելուածը պիտանի խրատներէ զատ մտածումներ ալ կը պարունակէր: «Վախցի՛ր կնոջ արցունքէն», փուշի խղիւղութիւնը գլխոյն բիրեն աս խոհը վերձանած պահուս, ու այդ սուղ տողը միտքս ընդ երկար զբաղցուց:

Ան ատենները դպրոցական էի: Բառը ինքնին չըսե՛ր ձեզի արդէն թէ կեանքի մասին ի՞նչ գոյն գաղափար կրնայ կազմած ըլլալ տղայ մը որ ստուերէն կը ճանչնայ ճիշդը և «կին» անունէն կը խելայեղի երկնային մոգութեան մը պէս: Ուղեղս ինչքան արորեցի՝ կարդացածս վերլուծելու համար. բայց մի՛շտ անիրաւ, մի՛շտ խեղճ գտայ զայն խորհողը, ի՞նչպէս, — կ'ըսէի իւրովի, — ժամանակը չէ պտըտցուցած իր ցեցի ժանեակը այդ էջէն ա՛յդ տողին վրայ մանաւանդ. ա՛ն ըլլար թերեւս արժանի մահացումը նոյն անժուր մտածումին...

Բ.

Կնոջ արցունքը, համա՛կ քերթուած, համա՛կ զգացում այդ կաթիլը որ մարգրիտ ուղունքի աղնիւ պսպղանքն ունէր իր մէջ:

Ամէն անգամ որ աղջկան մը թարթիչներուն փշիւղանքին վրայ պճտուն արցունքի շիթ մը տեսնէի՝ որթատունկի խորձուիւններուն ծայրը սարսուռն ցօղին պէս՝ պլախի մը կը զալարուէր հոգիս, զինովնալով տարտամ տրտմութեան մը խունկովը:

Այսպէս լացի այդ պուտը էգ անհակապիճներու մէջ աղամանդի լիճ կ'ըլլար՝ վիշտը հոն պերճօրէն խեղդամահ ընելու եւ տեսողութեանս խօսելու ամբողջ պատմութիւնը իղձերու անգուլթ թեւատումին: Լացի այդ պուտը, տա՛ք, բիւրեղ ու աղու՝ ուսկից հոգիս տաքնալու տեղ կը սրսփար լուսնկային առթած զով փալիւլանքին պէս...

Գ.

Բայց անցան պատանեկութեանս այդ միամիտ օրերը որոնց մէջ միշտ քօղի մը ետեւէն նայող էի բանի մը: Ինչ որ էսպէս իրական էր՝ երեւոյթ էր դարձած այդ ծածքին տակ՝ ուսկից ներս, աւա՛ղ, աչքս չէ՛ր զօրած թափանցել:

Կամաց կամաց զգացի թէ քօղին անդիի կողմը յաճախ կեղծիք ու պատրանք թեւ թեւի տուած կը կայթեն եղեր, և թէ մարգրիտ ուղունք, աղամանդի փսոր նկատած կայլակներս սոսկ ապակիի արժէքէ՛ն իսկ զուրկ են եղեր: Տեսայ, ապրողի անվրէպ աչքերով տեսայ այն մարդորսութիւնը եւ հաճելի երեւնալու այն ճիգը որ կը ծպտէին այդ արցունքներուն մէջ, ու ատոնք աւելի նենգալի աւելի սուտ գտայ քան մեր դպրոցի արցունքները զոր թուքով կը շինէինք աչքերնուս անկիւնին, միւսիւնիս խաբելու համար...

Անպատճառ օրինա՞կ մը կ'ուզէք, լաւ: Լման երեք տարի լուսպաշտումով մը ապրած էինք պատշգամէ պատշգամի: Իրարու քով առաջին գալերնիս էր: «Յաւիտեան» կը մրմնջէր ան, աչքերը անհուն հեշտանքով մը թարթելով: «Ինչէ՞ն գիտնամ» հարցուցի՝ յանկարծ՝ սկեպտիկի պաղ վարանքով մը: Ան պի՛շ ինձի նայեցաւ աչքերուն մէջ գաղջ խոնաւութիւնը լեցուցած: Տարի մը չէ՛, երկու ամիսէն կ'ամուսնանար ան մինչեւ իսկ եղունգիս ճոթը չարժողի մը հետ:

Դ.

... Յօրանջումէս կզակներս ա՛լ փրթած՝ կը պատրաստուէի պառկել, ժամը եօթը կը դարնէր, կազը մարած էի՝ անկողինիս գլխերուան արհաւիրքով փաթթուելու խօլ քը-

մայքով մը : Երբ ննջասնեակ մտայ , սըղ-
տիկ չլուկ մը սիրտս թրթռացուց , ա-
կանջ տուի չունչս բռնած : Հեկեկանք մըն
էր լսածս , մեղմիկ , խեղդուկ ու ցաւագին՝
որ արիւնս կը սառեցնէր երակներուս մէջ :
— Մա՛յր , ձայնեցի յանկարծ կատաղի
մղձաւանջով մը :

— Ե՛ս եմ , տղաս , մի՛ վախնար... :

Լացը մէկէն ի մէկ դադարեցնելու ճիգը
կար իր ձայնին մէջ : Խեղճ մայրս , եղբորս
համար կուլար նորէն , դուրսերը , տարիէ մի
վեր բաժնուած , իր միտի շէնքէն վլած թա-
ւալած այդ քարին կարօտը կ'ողբար ան
այսպէս՝ միս մինակ :

Ճանչցա՞ծ էք լաց մը ա՛յնչափ անկեղծ ,
ա՛յնչափ յուզիչ եւ ա՛յնչափ սիրտի դաշող
որքան այս լացը մօրկանա՞ որ կէս դիշեր-
ուան ձերուկի մեծ քունը ծախած՝ ելած
արձանացած էր պատուհանին առջեւ դիշերը
հսկելու իր լուռ արցունքներով ու նայելու
հորիզոնի սեւութիւններէն անօգուտ դարձին
իր տղուն... :

Գաղանիքդ նե՛րսդ դաշունել , ասոր ա-
նոր չի բանա՞լ հոգիիդ լլկանքը , ոչ ոքէ
մուրալ կարեկցութիւն ու սփոփ , ու միայն
մութի՛ն ցուցադրել վիշտերուդ աղի քամու-
կը... ո՞ր վիշտ աս աստիճան վեհ , ճշմարիտ
ու խորունկ :

Սուտ , գաճաճ արցունքներուն քով պիտի
բուսնին միշտ անկեղծներ ալ կանացի արտե-
ւանունքներու վրայ՝ մեզ պատմելու լռելեայն
անսահմանութիւնը մայրական սէրին , ա՛յն
արցունքները որ օտար նայուածքներէ զգոյշ
կ'արտատորին ու նազանքը չունի՞ն երբեք
թաշկինակով խխմուելու... :

Բ. Կ. Լաւրենտի



ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿՍՄ

ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՅ

(Շար. ԺԳ. քիւնց)

ԱՄՓՈՓՈՅԹ. — 1. Դաստիարակութեան
գործին բուն նպատակն է մարդը կազմել ման-
կան մէջ , իր բ՛ուրեան երեակ տեսակետով ,
ֆիզիսական , իմացական ու բարոյական . —
2. Ինքնաձիգ դաստիարակութիւն մը կայ որ
ինքնին անբաւական է ու քերի , եւ կանոնա-
ւոր դաստիարակութիւն մը , որ առաջնոյն կը
նետելի , ուղղելով եւ լրացնելով զայն . —
3. Դաստիարակութիւնն երկու մաս կը պա-
րուակէ , զորս պէտք չէ Եվրոպէ , 1. Բն'ւն դաս-
տիարակութիւնը , կամ կարողութեանց զար-
գացումը , 2. Ուսումը կամ հմտութեանց եւ ծա-
նօթութեանց ստացումը : — 4. Բուն դաստիա-
րակութիւնը երեք ստորաբաժանում ունի. Թի-
զիսական դաստիարակութիւն (Education phy-
sique) , Իմացական դաստիարակութիւն (E-
ducation intellectuelle) եւ Բարոյական դաս-
տիարակութիւն (Education morale) :

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄ. — Դաստի-
արակութիւն կամ կրթութիւն (Education) բա-
ռը կը նշանակէ կարողութեանց զարգացում :
Այս բառը երբեմն մանկավարժութիւն բառին
հետ նոյն իմաստն ունի . ինչպէս կ'ըսենք՝
դաստիարակ , մանկավարժ : Բայց հոս դաս-
տիարակութիւնը ըսելով , մասնաւորապէս կը
հասկնանք մանկութիւնը կրթելու , անոր
թաղուն սերմերը մշակելու եւ ոյժերը զար-
գացնելու գործողութիւնը : Ուրեմն դաս-
տիարակութեան նպատակն է մարդը կազ-
մել մանկան մէջ , իր ֆիզիսական (մարմնա-
կան) , իմացական եւ բարոյական բնութեան
երբեակ տեսակետով :

Ճշմարտան ըսելով , մանկութեան թա-
գուն սերմերն ու ոյժերը կրնան ինքնաբե-

բաբար զարգանալ, առանց ուսուցիչներու և ծնողքներու հաշուեալ միջամտութեան, լո՛կ օրբստօրեայ վարժութեամբ, և ազդեցութեամբ ա՛յն միջավայրին ու՛ր մանկութիւնը սովորաբար կ'ապրի: Ընդհանուր տեսակէտով մը, ա՛յդ ալ տեսակ մը դաստիարակութիւն է, և այժմ է խոստովանիլ թէ՛ ահագին ազդեցութիւն կ'ընէ անհատի մը ապագային վրայ: Ստոր պիտի ըսենք ինքնաճաճիմ դաստիարակութիւն (Éducation spontanée): Բայց փորձառութիւնն ամէն օր ցոյց կուտայ, և բանավարութիւնն ալ միւս կողմէ մատնանիշ կ'ընէ մեզ թէ՛ այս դաստիարակութիւն յամր, դժուարին, անստոյգ է, շատ թերի եւ յաճախ ցաւառիթ արդիւնքներ միայն կուտայ, մէկ խօսքով ինքն իրեն անբաւական ու անկատար է, եւ մինչեւ իսկ յառաջ պիտի երթանք ըսելու թէ՛ այդ կերպով մեծցող մարդիկ անդաստիարակ են: Ուրեմն կանխաւ որոշուած և լուսամիտ ընթացքի մը հետեւելով, անհրաժեշտ է օգնել մարմնոյն և մանաւանդ հոգւոյն ինքնածին զարգացման, քայլ առ քայլ հետեւելով անոր, նպաստաւորելով և ամբողջացնելով դայն: Ահա ա՛յս է կանոնաւոր դաստիարակութիւնը, ճշմարիտ դաստիարակութիւնը, միակն որով պիտի զբաղինք հոս:

Իր նպատակին հասնելու համար, դաստիարակութեան կիրարկած լաւագոյն միջոցներէն մին է Ուսումը (Instruction), այսինքն ծանօթութեանց ստացումը, միջոց՝ առանց որոյ դաստիարակութիւնը թերի պիտի մնար: Բայց ուսումը դաստիարակութիւն չէ, այլ անոր մէկ գործիքը, երկրորդական մէկ մասըն է, ո՛րքան ալ անհրաժեշտ սատարն եղած ըլլայ անոր: Ուսման իրական արժէքն է ա՛յն օժանդակութիւնը զոր կ'ընձեռէ դաստիարակութեան գործին, վերջնական եւ բուն նպատակին հասնելու համար, այն է՝ մարդուն զարգացման և ազնուացման, մանաւանդ անոր բարոյական ազնուացման:

Ուրեմն դաստիարակութեան մէջ երկու որոշ մասեր կան զանազանելի. — 1. Բուն դաստիարակութիւնը, այսինքն մարդուն կարողութեանց զարգացումն եւ ուղղութիւնը: 2. Ուսումը, այսինքն ծանօթութեանց եւ հմտութեանց ստացումը: Առաջինը, ինչպէս

կը տեսնուի, կարեւորագոյնն է, և նախ պիտի գրաւէ հոս մեր ուշադրութիւնը:

Բայց նախ պարտինք ըսել թէ՛ մարդու երբեակ ընտելին մ'ունի. արդարեւ, իր մարմնէն զատ ունի նաեւ հոգի մը, ճշմարտութիւնը փնտռելու և գտնելու կարող: Նոյնպէս կենաց գործերուն մէջ, բարոյն և չարին միջեւ ազատ ընտրողութիւն ընելու կարողութիւնն ալ ունի: Ահա ա՛յս է իր երբեակ ընտելութիւնը, Ֆիզիքական, իմացական և բարոյական, երբեակ իր միջոցներուն և յայտնութիւններուն մէջ, այլ միակ՝ իր վախճանական նպատակին՝ ինչպէս իր էութեան մէջ: Ուրեմն դաստիարակը պարտի մարգել մանկան մէջ կարողութեանց երեք մեծ խումբեր. հետեւապէս բուն դաստիարակութիւնը, որ պիտի զարգացնէ այդ բոլոր կարողութիւնները, կրնայ նկատուիլ երբեակ տեսակէտով. ըսել է թէ՛ երեք տեսակ դաստիարակութիւն կայ. 1. Ֆիզիքական (մարմնական) դաստիարակութիւն. 2. Իմացական դաստիարակութիւն. 3. Բարոյական դաստիարակութիւն. Յաջորդաբար պիտի խօսինք ասոնց վրայ:

Մ.

ԿՈՐՍՈՒԱԾ ԷԶԵՐ


Խղճի խայծը զեռ չէր լըռեր սրտիս խորշ,
Դեռ տար ամիսն մը կը մընար հոն թաղուած.
Դեռ արցունքոտ յիշատակ մը անորոշ
Ինձ կը թուէր խօսիլ կամաց, շատ կամաց:

Ձայն մը կար զեռ մօտիկ ա՛յնքան որ իմաց
Կուտար մէկիկ մէկիկ վիշտեր մեռած, գորշ.
Ու ես պարապ տեղ անցեալի մ'անախորժ
Կը ձգնէի այրել էջերն իմ դիմաց:

Հին ու չըգոյ սա եմբրուն իմ ցանցիք
Էջերը զոր ժամանակն է մաշոտած
Եւ զոր հիմա կը զիտէի, աչքս անձաց,

Կը զիտէի, կը զիտէի անձանմիր,
Ու չը գիտեմ ինչո՞ւ տարսուռ մը թեթեւ
Դեռ կը ցնցէր այդ էջերը յարստեւ...:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ



ԻՄ ՀԱՃՈՅՔՍ

Ա.



ԲԿԻՐԱԳՆԴԷՆ ԴՈՒՐԱՍ, ՎԵՐ ԹՈՒՆ ՆՈՐ մոլորակ ծոցն անհունին .
 Ուր կը վխտան տիեզերքներ ու կը լողան յաւիտեաններ ,
 Ուր մեր Արեւ շող մ'է առկայծ . Երկիրն՝ հազիւ հատ մ'աւազի ,
 Մարդկութիւնն ալ միլիառաթիւ մը ջիւղնոց մը հիւլէ հազիւ :
 Միգամած է ի միգամած հասնիլ , բաղխել մեծ դուռն այն կողմ ,
 Որուն ետեւ լարած իր հորն Անեղն հինէ զ'Արարչութիւն :
 Սիրականիս դուռը վրան գոցուած դրախտին խնդրել բալին ,
 Զոր մարդակերպ յեղեղակներ իր անունով գողցան , գնացին ,
 Բանալ անով իմ հաճոյքին արքայութեան դռնակը գոց :
 Ապա դառնալ նոր աշխարհք գալ , Աշխարհք մտնել Հուրիիս հետ :

* * *

Գողնա՛լ այգէն բիրն Արեւուն ու գիշերէն՝ ա՛չքը Լուսին
 Կտրել, անցնիլ ամպն , հորիզոն , կլիմաներն անջրպետի
 Կայլակել լոյսն սփոփարար որոց նստինն ի՛ խաւարի ,
 Ու մութին մէջ հեծկլտացող մոլորելոյն վառել ճրագ ,
 Կաթել համարյոյ պանդուխտ հիւժող մեր սիրելեաց կարօտ դէմքին ,
 Ժողվել, ժպտի փոխել արցունք՝ զոր գոգերով թափէ այրին ,
 Իւր հիւղեկի գեշերոյն մէջ՝ օրրանին քով ցամքած ստինք .
 Ու ժամերով կալ կողկողել մայրակորոյս մանկան մը պէս .
 Ի՛ սեւ սնար՝ դա՛ կնճնեաց տակ , փորուած , փռուած հողակոյտին ,
 Ուր մեր սրտէն փրթած , փրցուած սիրելիներ կմախք պառկին :

* * *

Մտնե՛լ աշխարհք իմ հոգիին . տիեզերք մ'է յիս և հոգիս .
 Գաղափարաց ու զգացմանց ովկէան մը հոն կը ծփայ
 Կրից , յուզմանց մըրկօքն յար տատանոտ եւ որոտուն ,
 Ուր կոհակաց մէջ միտքս ու սիրտս նոր աշկիտն կը լուղորդին ,
 Հոն սէրն ունի իր եղեմը , խեղճ՝ իր դժոխք , սուրբն՝ իր խորան .
 Հոն Գեղեցիկն ու Վսեմը ունին իրենց երկինքները ,
 Ուր խանդավառ խոյանք խոկմանցս օդապարիկ կը սաւառնին .
 Հո՛ն կը ծաղկի Տէմպեանն հովիտ , հո՛ն Հելիոն , հո՛ն են Մուսայք ,
 Հո՛ն կրօնքըս ունի տաճար , եւ հաւատքս՝ արքայութիւն ,
 Ուր սիրուհիս նորէն քօղքուած , Յիսուսի հարս պիտի ճոխայ :

* * *

Իմ հաճոյքս է ապրիլ իմ մէջ , հասարակաց աշխարհէն դուրս ,
 Աւել յինէն ցանկալիներն իր սնոտի ու չքոտի ,
 Յնցոտւոյ պէս հոսել յ'աղտիւրն եւ կամ ի՛ գոմ Եպիկուրեան .
 Եհովայի հրեշտակին դնել տապարն եւ առ արմին
 Որուն վրայ տնկած են ծառ մոլութիւնն ու գիտութիւնը .
 Ու մղեղել ի՛ բոց , յ'աճիւն իր գետնաքարչ ցնորքները .
 Քաշուելով յ'իս , յ'աշխարհն հոգւոյս , նոր Պրահման՝ քո՛ւրմ տեսլասոյզ .
 Ման գալ բնիկ հոն աշխարհիս լճին , առուին եզրն երազոտ ,
 Ոյց դեռ ափունք ու ալեկունք գաղտ կը պատմեն Հուրւոյս վէպն հուր ,



ԵՏԵԻՆՍԼ օրը, կիրակի, հոգիները սեղմող եւ ճանձրոյթ սրսկող ամպամած օդ մըն էր տխուր։ Առտունէ սկսեալ միօրինակ կերպով բարակ անձրեւ մը կ'իջնար և գետինները կը ցեխոտէր։

Լուսիս ժամէ մ'ի վեր անձայն նստած էր ամուսնոյն դիմացը, բայց յարափոփոխ տպաւորութիւններու կ'ենթարկուէր։ Աննշմարելի ծիծաղներ կ'ունենար, կը տփռուէր մերթ, մերթ շնչառութիւնը կ'արագնար ու դէմքին ջիղերը կը պրկուէին ու կը թուրնային փոփոխակի։ Կարծես թէ մտադրութիւն մ'ունէր կամ բանի մը կ'սպասէր, ու այդ սպասումի անհամբերութենէն սիրտը կը ճաթէր։

— Ի՞նչ խորհեցար, տեսնենք, սկսաւ խօսիլ յանկարծ սրտնեղ՝ ու չար նայուածքը վրան տնկած, ի՞նչ որոշում տուիր, այսօր երեք օր է տակաւին բերնէդ բառ մը դուրս չի հանեցիր. եւ հարկ կ'այ ըսել թէ առաջուան ըսածներուդ մէջ ալ արժէք ունեցող գաղափար մը չի կար երբեք։

Երեք օր առաջ նամակ մը ստացած էին որով «Բ***», մեծահարուստ սեղանաւոր, Ֆիմին կնութեան կը խնդրէր։ Լուսեա պիտի խենթենար, չլացած՝ հարստութեան գաղափարէն և կաղմ ու պատրաստ եղաւ աղջիկը այդ մարդուն տալու։ Հայրը, ընդհակառակը, սաստիկ նեղացած ու դժգոհ այս երեւոյթէն՝ «Դեռ կանուխ է Ֆիմիի համար...» ըսած էր Լուսեայի, և կամ ստիպուած՝ «կը խորհինք» և ինչպէս պատասխանած էր, ինչու որ այդ հայրը որ իր լուութեանը մէջ ո՛չ միայն նշմարած էր Ֆիմիի նորանշան վիճակները, այլ ինքնիրեն տուած անոնց մեկնութիւնը — «Ֆիմին Վահէն կը սիրէ կոր» խորհած էր ու գնահատած Ֆիմիի ճաշակները, ըմբռնումները՝ հիմա ի՞նչպէս պիտի կրնար, ինքը որ

հետ նոր թուական մը բերած էր այդ յարկին մէջ, — նոր աշխարհ մը բացած իրեն։ Ու հոն՝ այդ տողերով՝ կ'օրհնէր Ֆիմի ամէն ինչ որ օգնած էին Վահէն իրմէն ծածկող քօղը փարատել։ Կ'օրհնէր դիպուածը, օրը, ամէն ինչ, բայց մանաւանդ իր քուզէնին՝ Տիրանի ճամբորդութիւնը որ ամէնէն հզօր առիթը ներկայացուցած էր որ տեսնար, ճանչնար այդ խորհրդաւոր անձը։ Անոր մէջ ամէն բան ներդաշնակութիւն, բարձրութիւն, վեհութիւն կը գտնար, խօսուածքը, գաղափարները, աչքերը, շարժումները, տխրութիւնը, լուութիւնն իսկ։ «Հրաշալի՛ է, կը գրէր հոն, հրաշալի՛ք մը նոյն իսկ...»։ Եւ այն տողերը որոնց մէջ իր անհուն վիշտն ու զայրոյթը կը բացատրէր այն նիւթական և բարոյական խոչընդոտներուն դէմ որոնք պատճառ եղած էին որ այդ մեծատաղանդ երիտասարդը չը վայելէր այսօր տիեզերական հիացում, այդ տողերը տեղ տեղ աւրուած էին արցունքի հետքերով։

Ֆիմի իրօք լացած էր այդ դառնագին տողերը գրած ատեն...

Այդ արցունքները, սակայն, կ'զգացնէին իրեն թէ հոգիին մէջ պէտքի մը բոցը ինկած էր, պէտք մը որ համակ տենչանք էր, համակ խտէալ, — ճանչցած էր Վահէն, պիտի ծանօթացնէր Վահէն, պիտի փրկէր Վահէն, պիտի սիրէր Վահէն...

Երբ այս ոգին պարունակող տողեր կարդաց Լուսեա իր աղջկան օրագրին մէջ, չկրնալով անշուշտ, իր անձուկ եւ նախապաշարեալ ուղեղով վերլուծել զանոնք՝ ու անոնց մէջ ընդհամարել տարբեր բան մը, աւելի բարձր բան մը քան սէրը կոյր, հասարակ, կատաղութեան բուռն զայրոյթ մը գահավիթեցաւ ներսիդին՝ աչքին առջեւ բերելով մի առ մի Ֆիմիի ամենօրեայ զանազան վիճակները, որոնք հիմա ա՛լ կը պարզուէին իրեն։

— Հիմա կը հասկնամ կոր, մոլտաց ակռաներուն մէջէն և գլուխը տատանելով չարամիտ ու բարբարոս



ՆՅԱԾ էին քանի մը ամիսներ այդ տեսչական օրէն ի վեր երբ, օր մը, Լուսիա, լուսաւորելու համար կարծես այն անթափանցելի չե՛ս գիտեր ինչը որ իրեն կը թուէր ընդգդալ Ֆիմիի էութեանը մէջ, անոր սենեակը մտաւ, երբ ան հոնկէ բացակայ էր, ու սկսաւ աւելի բնագոյական դրդումով մը քան որոշ նպատակով, աղջկանը դրադարանը խառնշտկել:

Վերջապէս, տետրակ մը դուրս հանեց: Բացաւ: Թղթատեց ու սկսաւ էջի մը վրայ արագօրէն պտտցունել տգեղ աչքերը:

Դէմքը յանկարծ ապշութեան և կատաղութեան արտայայտութիւն մ'առաւ: Կարծես ծանր բաներ կային հոն գրուած, աչքերը կը բոցավառէին ու ահաւանբը սեղմած՝ սկսաւ վայրագ շեշտերով բաներ մը մոլտալ:

Ֆիմիի օրատետրն էր այդ, ուր անիկա էջեր ու էջեր լեցուցած էր, տողեր՝ բոց տառերով, հոգիոտ բառերով, ու ձօնուած իր «Ա՛լ գտնուած մտատիպարին» որպէս գրած էր հոն ինքը: Ա՛լ կրնար մեկնել հիմա այն թաքուն ոյժը որ իր հոգին անսահմանելիօրէն հաղորդակցութեան մէջ դրած էր հոգիի մը հետ որ՝ թէեւ իրեն անձանօթ՝ իր մտատիպարն էր, իր կեանքը արդարացնող երեւոյթը պիտի ըլլար և որ, ա՛լ կը հասկնար, միակ պատճառն էր եղած այն անլուծելի տրտմութիւններուն, նոյնիսկ տառապանքներուն զորս վերջերս կ'ըգար իր մէջը: Ճակատագրին առեղծուածը լուծող, կեանքին խորհուրդը լուսաւորող այդ «ալ գտնուած...» մտատիպար անհատը Վահէն էր, Վահէն՝ որ իրեն

կ'ատէր այլ ևս նիւթական մերկ մեծութիւնը ու կը զոհուէր ընդհակառակը բարոյական եւ իմացական ճամբիտ մեծութեանց դէմ, այո՛, ի՞նչպէս պիտի կրնար Ֆիմին, իր սիրական աղջիկը, յանձնել այդ կոշտ-հարուստ մարդուն:

— Երեւակայէ անգամ մը, կը շարունակէր Լուսեա բորբոքած, քաղաքին է՛ն հարուստ մարդը՝ մեր աղջկան ամուսինը, մեզի փեսայ... Ծնողքի մը ամէնէն ստիպողական պարտականութիւնը իր զաւկին, իր աղջկան ապագային, անոր ամուսնական խնդիրովը զբաղիլն է՝ երբ ա՛լ ժամանակը կը հասնի: Այդ ժամանակը եկած է հիմա, քանի որ քսան տարեկան եղաւ Ֆիմին, եւ նաեւ քանի որ, ինչպէս դիտել տուի քեզի, աղջիկդ տարօրինակ վիճակներ ունենալ սկսած է: Դու բռնած ճամբադ անտարբերութիւն, անհոգութիւն կը նշանակէ, ատանկ չպիտի ընէր ճամբիտ հայր մը:

Նորէնոֆ լաւ ճանչնալով թէ Լուսեա հեռու էր իր խաւար ու նախապաշարեալ ուղեղովը Վահէ մը հասկնալ եւ գնահատել, ազատ չէր զգար յայտարարելու իր անձնական կարծիքը:

— Լուսեա՛, ըսաւ, այդ հարուստ անձը ծանօթ է քեզի, կը ճանչնաս անոր ներքին մարդը, Ֆիմին ալ կը ճանչնայ՝ զանի, և կամ այդ մարդն ալ կը ճանչնայ այն աղջիկը որ իր կինը պիտի ըլլայ: Իրարու պիտի յարմարին:

Բնաւ համամտութիւն չը ցուցնող այլ փափկութեամբ արտայայտուած այս խիստ պատասխանին մէջ Լուսեա կարծեց յաղթանակը տարած ըլլալ:

— Իրարու պիտի յարմարին, պիտի չը յարմարին, ըսաւ տիրապետող շեշտով մը, ատոնք ամէնքն ալ ոչինչ խօսքեր են, սա՛նկ մէյ մը միտքիդ առջեւ բեր հարուստու...

Ֆիմի որ ներս մտաւ այդ պահուն, պատճառ եղաւ որ խօսակցութիւնը խզուի: Սակայն այս բանը արգելք չեղաւ

որ Ֆիմիի ի տես Լուսիայի դէմքը պոռոտ գոհունակութեան մը արտայայտութիւնը ստանար:

Տրտում էր Ֆիմի եւ նիհար. ու պատուհանին քով դա-
ցած՝ հազիւ մեղամաղձութեամբ մը սկսած էր անձրեւոտ
օդը դիտել երբ մայրը յանկարծ՝

— Ֆիմի՛, ըսաւ՝ ջանալով ձայնին տալ հանդարտ շեշտ
մը, Ֆիմի՛, քեզի երկու խօսք ունիմ:

Գոյնը նետեց խեղճ աղջկան ու սրտատրոփ սպասեց մօրը
երեսն ի վեր:

— Նախ ինծի ըսէ նայիմ, Ֆիմի, թէ ի՞նչ է այդ փոփո-
խութեանդ պատճառը. ատ ի՞նչ նիհարութիւն է, ատ ի՞նչ
երեսի գոյն, մէյ մը հայելին նայէ ինքզինքդ պիտի կրնաս
ձանջնալ: Աս փոփոխութեանդ պատճառը բժիշկէ մ'աւելի
դուն պիտի կրնաս գիտնալ... Ըսէ՛ ուրեմն, Ֆիմի, ի՞նչ
ունիս...

Տօգունած ու յօնքերը պռատած, տրտմութեան եւ զայ-
րոյթի խառն արտայայտութեամբ մը լուռ կը մնար հոն
Ֆիմի:

— Խօսէ՛, Ֆիմի, շարունակեց մայրը կեղծանուշ ձայնով
մը, խօսէ՛, եթէ չես ուզեր որ հայրդ վշտանայ ու չես ու-
զեր որ մայրդ տառապի: Լռութիւնդ կրնայ փնասարեր ըլ-
լալ թէ՛ քեզի եւ թէ՛ մեզի համար: Թերեւս վիշտ մ'ունիս,
դարմանելի վիշտ մը թերեւս, գուցէ ի՞նչ գիտնամ. կաս-
կածելի գաղափար մը... ասանկ փոխուած քեզ՝ առաջին
անգամ է կը տեսնանք... ի՞նչ ունիս, պատասխանէ՛ Ֆիմի,
մի՛ առանկ սիրտս հատցուներ:

Նոյն դիրքին մէջ կը շարունակէր Ֆիմի մնալ անխօսուկ
ու բնաւ ալ երեւոյթ չունէր խօսելու:

Այն ատեն ա՛լ հատաւ Լուսեաի համբերութիւնը եւ աչ-
քերը կէս մը փակելով... վարպետորդի ձեւանալու համար:

— Շատ աղէկ, ըսաւ, չես խօսիր, չես պատասխաներ
դուն Ֆիմի, բայց պէտք է գիտնաս որ, ես, ինծի պէս մայր

քին, Տիրան զգաց թէ ծունգերը կը կթոտէին, սիրտը ճըն-
շուիլ, ձգմուիլ սկսաւ եւ չը կրցաւ բան մը ըսել, այնքա՛ն
վրդովուած էր... Բայց մինչ լռին կը յառաջանային, այդ
ձանրացող, թախծագին լռութեան մէջ Տիրանի ականջին
կը գոռար Վահէի ներքին ձայնը. «Սատանա՛յ մըն է այդ
կինը, հրէ՛շ մը...» եւ կը սարսուար, գէշ նախազգացումներ
կ'ունենար Տիրան՝ յիշելով այդ վայրկեանին այն խօսքը որ
օր մը Վահէ ներկայացուցած էր իրեն, իբր իր փորձառու-
թեան անջնջելի մէկ յիշատակը:

«Անդառնալի կերպով, ըսած էր ան, կրնամ վստահ ըլ-
լալ թէ այնինչը ազնիւ կամ չար մէկն է՝ ըստ այնմ որ ա-
նոր դէմքին առաջին տեսքը լաւ կամ գէշ տպաւորութիւն
պիտի թողու վրաս: Չարիքը կրած եմ ամէն անգամ որ այս
փորձաքարին միջոցաւ յոռին վճռելէն ետքը, պարագանե-
րու բերմամբ, տակաւին անոր հետ յարաբերութեան մէջ
մնալ ստիպուած եմ»:

Ու կը կտրէր խեղճ Տիրանի թափը...:



Եւ ուր սիրոյս յիշատակներ թէեւ աւեր այլ միտքսն դեռ :

* * *

Մերթ հիւր փռուիլ, չուք մ'հովանոց, սօսւոյ մը տակ, Դրուի՛ղ ծառայաշտ .
Սօսափիւնէն քաղել պատգամ սիրուհւոյս հէգ ճակատագրին ,
Մերթ Կախէթու նեկտարովը փրփրցուցած խանդս պուէտ ,
Գողթան երգչի ծեր փառազուն փանդիւններովն երգել Հուրիս ,
Որպէս երգեց Սողոմոնը իւր Բոյրն ու Հարս սրտացուցիչ .
Որպէս երգեց Վերգիլիոս հովուհիներն Ոսկի դարուն ,
Ու Ներա հետ պիտի պլլուած պաշտել բամբիշ՝ Կիւս խրճիթիս ,
Սիրահարի պարտքս ամբողջ ասպետի պէս հանած յամբով ,
Նշանածս տեսնել ինձ հարս , ինձ տիրուհին աղիկամի ,
Ու կողակից մտնել հողքը. ա՛յս է հաճոյքս իմ անձկալի :

Ա. Ա.



ԼԵԶՈՒՆ...

Արժագանգ առ ԹԵՈԴՈՒՆ



Ե՛Ս , ի՛նչ ազուրէ... .

— Բայց Ան արգիւեց... .

— Հատ մը կե՛ր, խնդրեմ... .

— Կը դողամ... . կը սոսկամ... .

— Ճաշակէ անգամ մը... .

—... Տո... . ւ... . ր... .

Եւ ահա այն ԼԵԶՈՒՆ, որ նախահայրդ մոլորեցուց՝ ամէն օր դէմդ է... . քու շուրջդ... . քու մօտդ :

* * *

Գիշերուան մռայլին մէջ՝ անկիւնը, պարտէզին խորը ծառի մը տակ առանձին կը խոկաս, դիտելով լուսինը որ երբեմն ամպերու մէջէն նաքօ կ'ընէ քեզ, փոքրիկ բուբէի մը պէս որ կաթնաթոյր թաթիկներով կը ծածկէ դէմքը, նորէն բանալու հաճոյքէն մղեալ : Աչքերդ պաղած երկինքի հայելիին մէջ ուր անթի՛ւ աստղեր կ'անդրադառնան, կ'ունկնդրես Ֆլիքի մը հեշտալուր մեղեդիին որ կուգայ լսողութիւնդ համբուրել մեղմիկ... . Կը վերանաս, անանկ չէ՞... :

— Բարի իրիկուն, Պարոն :

—... .

— Ինչո՞ւ այսպէս մինակ... .

— Արթուն երազ մը, Օրիորդ... .

— Եւ ես իրականութիւնը... .

— Եթէ կ'ընդունի՞ք... .

Խուն ինչ յետոյ, երբ գլուխդ ծնգացը վրայ, լուսինը կը դիտես գինովի մը մարած ակնարկներով— որ կը շարունակէ իր անվերջ նաքօն... . Ան կը թափէ մէկ կողմէ իր հալած մեղրը ականջիդ ու կը վերանա՞ս... . կը տարուի՞ս... . կ'անցնի՞ս... . :

Լեզուն իր դերը կատարած էր... :

* * *

Լուսողող երեկոյթի մը մէջ, վալսի մը հեշտօրօր տարուբերումէն արթնալ, կը դառնաս՝ թիթեռնիկի մը նախանձը գրգռելու չափ արագ և անուշ... . Գետինի գորգը իր բազմազունի ծաղիկներով ԴՐԱՆՏԸ, ձեղունը՝ ԵՐԿԻՆՔ ու մթնոլորտը՝ ԵԹԵՐԸ կը կարծես խօսական քուռնիւններուդ է՛ն տաք վայրկենին դողացող ու հեւհեւոտ ձայն մը, ամբան զեփեռին պէս զով՝ կուգայ լսողը— տացնել ականջդ... . :

—Կը սիրե՞ս զիս...
 Լեզուն իր դերը կատարած էր...

* * *

Փողոցի անկիւնը՝ տան մը պատուհանէն երկու աչք քեզ կը հետեւին առտու իրիկուն։ Կ'անցնիս անտարբեր, կոխած քարերդ համբելու չափ միամիտ քայլերով...։ Դու արդար գնացքիդ հետեւողը... գիշերը երազովդ կ'անցընէ, առաւօտուն իրականութիւնը տեսնելու անհուն տենչէն մղուած։ Կ'անցնին օրեր... կ'անցնին ամիսներ, թերեւս տարիներ ալ, իրիկուն մը երբ մութը ջղջիկներ կ'արձակէ գիշերը աւետելու, այդ լուռ ժամուն անուշ ժպիտով մը ճամբադ կը կտրէ։ Կը քաշուիս... սակայն անոր աչքերը քեզ շունչ կուտան։ Ու կը ԽՕՍԻ քեզ հետ, վանդակներու մէջ զըսպուած սոխակի մը պէս որ ազատ օդին կը շնչէ ու կը ճուռողէ անխոնջ, կը դիւթէ քեզ իր անուշ լեզուաւ... ու կը վերանաս պահ մը մոռնալով ծերուկ մայրիկդ որ սեղանին գլուխը անցած քեզի կ'սպասէ բաժնելու համար պատառը, մինչ դու սրտիդ պատառը կը փոխարինես մեղրակաթ խոտուամեղուն... ու ալ կը հալիս։

Լեզուն իր դերը կատարած էր։

* * *

Եւ վերջապէս, ազնիւ մտերիմս, մահճակալիդ մօտ հսկող մօրդ թախանձանքին առջեւ խուլ կը դառնաս, ծնողացդ ժպիտներուն «օ՜Ֆ»երով, «ա՛խ»երով կը պատասխանես։ Դեղ առնելու կը դժկամակիս, մեղամաղձոտ հովեր առած պատերը կը սաստես, խոժոռ ժանիքներ յօրինելով դէմքիդ վրայ... միշտ ցաւ ու վիշտ հրաւիրելով վրադ...

Սենեկիդ դուռը կը զարնեն։

Ահա ԵԻԱՅԻ աղջիկը ոտքերուդ կողմը թառած, կը խօսի, կը խնդայ, կ'արտասուէ, վարպետ դերասանուհւոյ մը կատարեալ ձեռնհասութեամբ։ Լեզուին դարձուած քննրուն առջեւ սիրտդ կ'սկսի իր խօսական թիք-թաքը, բերնիդ չուրջը ժպիտը կը հղովուի տակաւ խինդը կազմակերպելու

համար հոն...։ Ու ալ Ան չես։ Սրտիդ մեղամաղձոտ հառաչներուն հիմայ զանգահները կը պատասխանեն։ Կ'սթափիս ու չես մերժեր դգալ մը դեղը զոր մայրդ ի գո՛ւր ջանաց խմցնել։

Ան եկաւ հոգիիդ հետ խօսելու, քու հիւանդութիւնդ հոգեկան տանջանքներու ցնցումն էր, ու Ան հոգիիդ խօսեցաւ, իր լեզուին մեղրը հոգիիդ վրայ կաթեցուց ու անոր մէն մի խօսքը քու մէջդ վէրք մը գոցեց...

Լեզուն իր դերը կատարած էր։

* * *

Եւայի մեծ ու ահաւոր ժառանգը՝ որ կենաց աղբիւրն է, պէտք է ակնածանօք յիշել...։ Զի միեւնոյն ատեն կրնայ կեանքը պարգեւել, ինչպէս նաեւ մատնանիշ ընել ցուրտ փոսը։

Աղբիւրը բերանն է, ու լեզուն ծորակը... մեղր ու թոյն երկուորեակ կը հոսին։ Նախ թոյնը ծծէ... մեղրի անուշութենէն չի խարուելու համար...

Վ. Փ.

ԶԱԻԿԻՆ ՍԷՐԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

«Ուրե՛մն...»։

Արաքսի, աթոռի մը վրայ անշարժ ընկողմանած, բաց երկփեղկ պատուհանին առջեւ, իր խարտեաչ գլխուն դանգուրներու փունջին մէջ խրած իր փափուկ ու ողորկ ձեռքերը, որոնց վրայ կաթի պէս ճերմակ մաշկը կը պարուրէր, երիտասարդին մեկնելէն ի վեր մտածումներու անօրինակ աշխարհի մը մէջ մտնած, այս հարցը իւրովի կը կրկնէր շարունակ, խուլ ու տարտամ հառաչներով ընդմիջուած, ուզելով եզրահացութեան մը յանգիլ ա՛յնքան ատենուան ինքնավրդով մոտայուզումէն յետոյ։ Իր դէմ-

քը, սիրուն ու աղուոր, որ երազել կուտար Տիրամօր անուշ ու միամիտ պատկերը՝ Տաճարին պատերէն աւակախուած՝ խունկի ամպերու մէջ թաթաւուն, ու նմանութիւնը կը բերէր անոր աղուաշ դէմքին, վճիտ ու անվրդով ըլլալ կը թուէր տակաւին հաւառակ երգեմնակի բռնապետիկ փոթփոթումին։ Ու նայուածքն ալ դրաւիչ՝ անսահման բարութիւն մը կ'արտացոլար։

Բաց պատուհանէն դուրս, հանդիսակաց ըլրակներուն սարահարթին վրայ, կրկնակ վերտերով գօտելուած, իրիկնափառի արեւն իր հիւանդ ցոլքերը կը ցրցենէր տժգոյն ու բեկրեկ, որոնք կը թուէին ըլլալ մաղէ անցուած բոսորադոյն փոշիներ։ Բարձրածիզ շոճիներ իրենց ստուերները կ'երկարձգէին հեռուն, ուր դաշտերը կը փռուէին այլասեռ բուսականութեամբ աշնուած, եւ անկէ աւելի վարը, վերջալոյսի ճաճանչումներուն ոգեվար փայլին տակ, ծովակին ալիքները իրենց խենդ կմալոտիկի խաղերն ալ վերջացուցած, հիմակ իրենց անծով ու միապաղաղ փռուածքին վրայ հալած սակի ծեփ մը միայն ունէին։ Եւ տարուբեր հով մըն ալ ատեն ատեն կը հպէր ծովակին լոյծ-լանջին, իր միամիտ փափսուքը կրկնելով անոր, ու իր քմածին երգերը սահեցնելով ծովակին երկու կողմին ալ վրայ ասլածուող կնիւններու խորհրդաւոր թաքստոցին մէջ։

Միամիտ ինքն ալ, ալեծփիկ կեանքի մը տիպար իր բոլոր առնչութիւններուն մէջ, և որ պահ մը առաջ ըմբռնած էր իր էութիւնը վրդովող որդին զոյութիւնը իր սըրտին տակ, անվերջ խարխալումներէ ետքը։ Ու իր երկա՛ր սեւեռուն ակնարկը, որ կը մխրճէր տարածութեանը մէջ անքթիթ, երազային բա՛ն մ'ունէր, խօսուն յայտնիչը բոլոր այն վրդովումներուն, որոնք բոյն դրած էին ատենէ մ'ի վեր իր զիւրազդած մանկամարդի մորթին տակ։ Անձանթ հպանցումներէ գերազրդուած այդ տառապի պէս անբիծ հողին, որ անմեղունակ զարթնում մ'ունեցեր էր ատով, — զարթնում սիրո՛յ սարսուռին, — զգաց վերջապէս թէ հարկ էր անոր իրագործումին տեղի տալ, — մասնակցիլ Սահակի սիրոյն։ Խել խօլ հովու սաստիկ հոսանք մը, որ կը մտնէ

լեռնամէջի քարանձաւին խորը, ու անոր արհաւիրալի արձագանդէն՝ անսովոր դղրդիւնով կ'առլցուէ բոլոր չըջակայքը քարսկովի։

Այսպէս աղբաճ էր իր վրան վերջին կտրո՛ւկ յայտնութիւնը Սահակի բուռն սիրոյն։ Անսովոր եւ անօրինակ վրդով մըն էր իր զգացածը մէկէն ի մէկ, ու իր էութիւնը համբուն դղրդեցաւ հոգեւին այդ սիրոյ համբուն սարսուռին ցնցո՛ղ տպաւորութենէն։ Կը սիրուէ՛ր, կը սիրուէ՛ր անկէ։ Ու ի՞նչ բան աւելի անուշ է քան սիրոյ այն աղուաշ ասուլիսները, լուսընկայ դիչերներու հմայքը բոլոր։ Ի՞նչ բան աւելի հաճելի է քան սիրոյ այն քնքոյ խօսքերը, որոնք հեղդանքի մառախուղը կը պատռեն աղուոր երիտասարդի մը տարփոտ չըթներէն արտաբերուելով։ Ի՞նչ բան աւելի սուր է եւ մաքուր քան սիրոյ այն ցնծալից խօսքերը, որոնք իր սրտին մէջ ծով մը սէր ունեցող բերնէն կ'արտահոսին՝ իբրեւ ստալխ նուիրուելու համար իր սիրելիին։ Ա՛հ, ի՞նչ երանութիւն սիրուիլ այնպիսի էակէ մը, որ ծաղիկներու այլասեռ փունջի մը զիւթիչ ու հրապուրող բոյն ունի իր վրան։ Ու ի՞նչ ալ երջանկութիւն։ Ինքն հրեշտա՛կ մաքուր հողի, թեւ թեւի տուած, անութանութի՛ թռչիլ երազներու աշխարհին մէջ սիրելիի մը ուժին, բաղկին ապաւինած, ու անոր սիրոյն մանաւանդ — Ահա՛ ըղձանքը երազի հեշտաւէտ սիրոյն։

...Սահան բոլոր այդ ոսկեծիր չըջանալով պատկերացուած խօսքերուն ու յոյսերուն ետեւը չըլլա՛յ թէ խաբող օձ մը պատառատ ըլլար զինքն իր խոստումէն անմիջապէս յետոյ լքելու, պարտասո՛ւն ու ընկճուած։ Զըլլա՛յ թէ երիտասարդին այդ կերպերն իրեն թակարդ մ'ըլլան լոկ՝ չարաչար գործածելու համար իր սէրը, եւ միտում՝ իր կիւքին զոհելու։ Ա՛հ, հոս կ'ըսկէր իրականութիւնն ի յայտ դալ մերկապարանոց՝ դրականօրէն խորհելու ձեւին մէջ։ Ինչո՞ւ կ'ընէ պատրանք, երբ իր սիրտն անդամ մը պատա՛նք մ'եղած էր։ Եւ, ի՞նչ, պարմանի մը ո՞րքան հաւատք ընծայել։ Օ՛հ, խաբկանք։ Ցո՛ւրտ բան մ'ունէր այս մտաբերումն իր մէջ, որ կը հտէր բոլոր իր օ-

դային սփոփանքներուն հանգրիճումը: Աւելորդութիւն մը կը գոյանար իր արդէն վրդով խոհանքին մէջ: Ու ճարմանդը, զոր ինքը անոր կը կապէր, կը թուէնա՛ր, կը թուէնա՛ր կարծես, ինչպէս կը թուէնային՝ վերջալոյսի մղձաւանջէ բռնուած՝ արեւուն նուաղկոտ ճաճանջումները, որոնք սենեկին բաց պատուհանէն դէպի ներս կը յորդէին տարապայմանօրէն թոյլ կոհակաւորումներով: Իրենց սիրոյն մասին, սակայն, դեռ վերջին բառը, է՛ն ետքի յայտարարութիւնը չէ՛ր ըրած Սահակի:

Յ

Կամոտ ծնողքի մը ճնշումին տակ, Արաքսի պարտաւորուած էր իր թարմ կուտութիւնն յանձնել վաւառոտ ծերունիի մը, անոր ակապալիկ բերնին, անգոր ու վարանոտ շրթներուն հպումն ընդգգալ իր գեղեցիկ ու աղուոր աղկան վա՛րդ այտերուն վրայ: Եւ այդ տարեւորին դեղեկոտ բազուկներուն մէջ մարե՛լ իր բոլոր առուգութիւնը կեանքոտ: Յոյզի օրրան իր լանջն ընել դատա՛րկ՝ սիրող սրտի մը նախազգացիկ աւելնին հետ մէկտեղ, ու անոր բարախումներուն պախուց դնել բռնովին: Իր սրտին դեկը յանձնել ուրիշին, դերծ մնալու համար արբունքի առթած տուայտանքէն, որ սակայն քաղցրութիւն մ'ունի երիտասարդութեան աւելնով ու արիւնով ակաղձուն կոյս հողիներու համար: Եւ բոլոր այդ վառ գգացումներուն, զոր բնութիւնը կը դնէ մեր էութեան խորը գաղտագողի, ու այդ պատուքին, վաւառոտ ծերունի մը չէ՛ որ պիտի կարենայ յագուրդ ու զոհացում տալ:

Մինչեւ այն ատեն երբ տարիքը տասնըջորսէն տասնըհինգ կը խաղար, Արաքսի անփոյթ գտնուած էր իր ծնողքին կացութեանը հանդէպ: անտարբեր թէ՛ ինքն և թէ՛ իր երկու պզտիկ եղբայրները սնուցանելու համար: անոնք ի՛նչ չարչարանքներ ստանձնելու դատապարտուած էին, եւ ի՛նչ խորխուր ու հետզհետէ քեցումի սպառնացող լատի մը յանձնուած էր իրենց ընտանեկան հաւաքոյթը՝ նկնումի ծովին մէջ հոսանքն ի վար չքուելու համար: Էսնաֆ դասա-

կարգին պատկանող պարզուկ ընտանիք մ'էին անոնք: Առաջները, բաւական բարեկեցիկ, սակայն հայրերնին՝ ի բնէ խման մը, գերի՛ կարմիր հեղուկին, իր օրական ամբողջ ապրուստը հոգալէն առաջ՝ կը ջանար պարարտացնել գինեպանին ազտո՛տ քսակը, ու իր վաստակը, հազիւ հազ ընտանիքի մը բաւարար, անխղճօրէն այս կերպով փճացնելէն վերջ՝ այդ թոյնին մէջ թաթաւուն ամբողջ մարմնովը չէ՛ր մտաբերեր թէ անդին իր ընտանիքը կը գոփա՛ր անօթութեան գիրկը:

[Շար. Եղանդի թուով]

Մ. ՅՈՎ. ՍԷՓԵԱՆ



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱԿՆԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[Շար. ԺԳ Թիւէն]

Փեսան այս արժարողութեան մէջ պատկառոտ դիրք մ'ունի. իր քով կը կանգնին իր կնքահայրն և տարբեր երկու տարեկից ալգակոսներ: ասոնք եկեղեցական չապիկ հագած՝ ափսէին մէջէն կ'առնեն փեսային զգեստն առանձին առանձին և «Աստուած շնորհաւոր ընէ, շնորհաւորն Աստուած ընէ», բարեմաղթութեամբ կը հագցնեն: Դիւարիկը, սակայն, տղուն հայրը կամ մայրը կը դնէ զաւկին զլուխը և կը համբուրէ անոր ճակատը:

Եկեղեցական արարողութենէն ետք հանդիսադիր քահանան քանի մը սովորական խօսքերով կը շնորհաւորէ ամուսնութիւնը և եկեղեցւոյն ու վարժարանին համար նուիրատուութիւն մը կ'առաջարկէ, որ բաւական կ'արդիւնաւորուի:

Դաւառներու մէջ տեղ տեղ փեսային մէն մի հազուստն աճուրդի կը հանուի քահանային միջոցաւ, բայց Ակնայ մէջ այս տղեղ սովորութիւն գոյութիւն չունի:

Franz Böhm

Bau- u. Galanteriewerkstoffe

Spezial

Wien

am

6. I.

194

6



Երբեմն Ակնայ միջ սովորութիւն էր փե-
սացուն և ունոր մերձաւոր ազգականներն
ածիլել հանդիսաւորապէս, նուագով և ու-
րիշ երգերով, բայց հիմա այս սովորու-
թիւնն ալ դադարած է :

Հարսանեկան ուրախութիւնք երեք օր
կը տեւեն . գիշեր ու ցորեկ միշտ խրախճա-
նութիւնք անպակաս են . յաճախ ընդհա-
նուր հայեկերոյթ մը կուտայ մանչուն ծը-
նողքը :

Պսակի արարողութիւնը գիշերը կը կա-
տարուի, և միշտ եկեղեցւոյ մէջ : Մանչուն
կողմէն կնքահայրն ու աղագականներ, գի-
շերուան ժամ 5-6ին, աղջիկն իր տունէն
առնելու կ'երթան և ընդդիմութեան կը
բաղխին, որովհետեւ ներսէն տան դուռը
դժուարաւ կը բանան պարգեւ մը ստանա-
լու համար : Երբ յաջողին վերջապէս
բանալ տալ դուռը, խմբովին ներս կը մտ-
նեն, տնեցիներէն կը հիւրասիրուին, զուար-
ճութեամբ կը պարեն ու կ'երգեն :

Ահա այդ երգերէն մին .

Ման եկուր աղուոր, ման եկու'ւր,
Դէպի մեր տուն ի գահ եկուր .
Աղջիկ աղուոր, քեզ ո՞ր մարն է բերեր
Ան թուի աչդ մարն է բերեր .
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար :

Կնքամօր կը ներկայացնեն սկաւառակ մը
որուն մէջ լեցուցած են փոշիացեալ հիւնա,
վրան մաս մը գինի ու մէջտեղն ալ 5-10
հատ իրար պլուած եկեղեցական բարակ մո-
մեր հաստատած : Կնքամայրն այս հիւնան կը
չաղէ եւ կարգաւ կը հրաւիրէ հարսներու-
ները, բայց նախ փեսան ու հարսը : Գըր-
պանէն կը հանէ խնամով պատրաստուած
ծրարիկներ գոյնզգոյն, անոնց մէջ կը զե-
տեղէ այն հիւնայէն մաս մը ու կը կապէ
ձեռքերուն վրայ կամ մատներուն ծայրը :

Երբեմն ձեռքն ամբողջ կը կարմրցնեն այս
հինայով . բայց հիմա կը բաւականանան մի-
այն մէկ մատին ծայրը կապելով . ուրիշ տե-
ղեր աղջկան ոտներն իսկ կը հինայեն մինչև
այսօր :

Մինչև առաւօտ այսպէս կապուած կը

մնայ հինան . երբ կը քակեն այդ ծրարիկ-
ները, կը փութան ձեռքերին լուալ և կը
տեսնես թէ կարմրցած է մարմնոյն այդ
մասը . ահա ա'յս է գաւառներու մէջ հարս-
նետր ըլլալու միակ նշանը : Այս կարմրու-
թիւնը ամիս մը ամբողջ և աւելի՝ հաստատ
կը մնայ մորթին և եղունգին վրայ :

Մարդկային կեանքի մէջ երեք մեծա-
գոյն պատահարներ կան, որոնք սովորու-
թիւններ ստեղծած են, և այդ սովորութիւնք
Դպրութեան տուած են միշտ գեղեցիկ կը-
տորներ, կամ դա'յն ոգեւորած : Այս հի-
նայի սովորութիւնն ունի իր հետ ժողովր-
դական շատ անուշ երգ մ'ալ, որմէ կտոր մը
կը դնեմ հոս .

Աս հիւնան այնպէս հիւնա չէ,
Ղըկողն ալ ի՞նչ աղուոր մանչ է .
Հիւնադ վարդի ջրով է շաղուած,
Բէրամ ըրէ՛ ձեռքունքդ բայ :

Հինայի արարողութենէն վերջ ճամբայ
կ'ելնեն եկեղեցի երթալու համար . ամենուն
ձեռքն ալ մէկ մէկ մոմ կը տրուի աղջ-
կան տունէն, որ տեղական բարբառով մա-
տալա և մզուր կը կոչուի :

* * *

Երբ մանչուն կողմէն աղջկան տունը
խնամի կ'երթան, հոն իրենց խրախճանքին
մէջ դարձեալ սիրոյ քնարն է որ կը խօսի,
երգե՛ր, որոնք կը պատկերացնեն Ակնցիին
սիրտն ու միտքը, վարքն ու բարքը . ահա-
ւասիկ անոնցմէ մէկ քանիներ .

— Եկու'ւր աղուոր աղջիկ եկեր ենք ձերը,
Եկուր քեզի նազերով տի տանինք մերը .
Եկուր քեզի մերը տանինք նազերով,
Պահենք շարէն շապկով, ազիզ լաթերով,
Ճակատդ նըռերով, ականջդ օղերով :

Ա՛յ իմ, ա՛յ աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր :

— Աղուո՛ւր, քեզ ո՞ր մարն է բերեր,
Ան թուի աչեր մարն է բերեր .
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար :
Ա՛յ իմ, ելն :

—Նազ ըրէ՛, նազդ վերցընենք,
Այա (միշտ) թող չաքար կերցնենք.
Ջուր ուզես՝ ծեղկեր խմցընենք,
Հաց ուզես քօսմէ կ'երցնենք:
Ա՛յ, ևլն:

Վերագրեալ տողերը հարմնցուին ուղ-
ղուած գովեստներ են, որոնց մէջ կը նշմա-
րէք անշուշտ այն խանդաղատանքը, գորովն
ու սէրը, զոր կը տածեն կեսուրը, տալն ու
ները և ուրիշ մերձաւոր ազգականներ:

Այս խանդաղից խնամիներ անքաղաքա-
վար չեն. երբ աղջկան տունէն պիտի մեկ-
նին, հետեւեալ բարեմաղթութիւնները
կ'ուղղեն.

Խնամի՛, տունդ չէն մընայ,
Այա (միշտ) դռնակդ բաց մնայ,
Ջուրս որդիքդ ապրած մնայ:
(Շար.) Վ. Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԻՉ ՍԸ ԽՆԴՈՒՔ

Պ. Ա.***, իր հրատարակած մէկ նորավե-
պին դիւցազնուհին Ն'վրիկ անունով միջը-
տած էր: Հետեւեալ օրը քիչ մը իրեն ծա-
նօթ անձ մը իր դուռը դարնելով.

—Ինձի նայեցէ՛ք, կը գոչէ կատաղու-
թեամբ, դուք ի՞նչ իրաւունք ունիք իմ
քրոջս վրայ նորավեպ գրելու:

—Բայց ի՞նչ կ'ըսէք, պարոն, կը պատաս-
խանէ հեղինակը պաղարիւնութեամբ, կը
սխալիք, իմ նորավեպիս դիւցազնուհին լըր-
ջութեան ու պարկեշտութեան տիպար մըն
էր:

* * *

Հանդերձեղինաց վաճառատան մը
մէջ.

Վաճառականը. — Ջուտ բուրդէ է աս
գօսդ իմը, առէք ու դո՛հ պիտի մնաք:

Յաճախորդը կը գնէ, կը հագնի ու դուրս
կ'ելնէ: Քիչ մը ետքը ճամբան դադած ա-
տեն մէկը ուսին կը մէտէ: Ետին կը դառ-
նայ ու կը տեսնայ ձի մը որ հագուստը

խածնելու փորձեր կ'ընէ, կարծես իրեն ը-
սել ուզելով:

—Խեղճ մարդ, սխալ կը խորհիս կոր,
դո՛ւտ խոտէ՛ է աս հագուստդ...:

* * *

Գինետան մէջ.

—Ինչո՞ւ օղին այդպէս սրուակով ուղղու-
կի բերանդ կը լեցնես:

—Որովհետեւ բժիշկը պատուիրեց որ օ-
ղին գաւաթը ա՛լ բերնիս չի դպցունեմ:

* * *

Կարպիսին գաւազանը արծաթեայ գե-
ղեցիկ խնձոր մը կը կրէ:

—Ի՞նչ է ադ, կը գոչէ անցեալ օր բա-
րեկամ մը՝ խնձորին կէսը կտրուած տեսե-
լով, ի՞նչ է ադ, մե՛ղք, ի՞նչ ես ըրեր:

—Գաւազանս երկայն էր ու միշտ կը
նեղէր գիս, ես ալ խնձորին կէսը կտրեցի:

—Տէր ողորմեա՛, բայց ինչո՞ւ միւս
ծայրէն չի կտրեցիր:

—Ապո՛ւշ, վերի կողմէն գիս կը նեղէր
կոր, չէ թէ վարի:

Ս.

ԱՅԼԱՓՈԽԵԱԼ ԲԱՌԱՐԱՆ

Դերեգումն. — Ծակ մը՝ ուրիշ միայն կըր-
նանք անդիի աշխարհը երթալ:

Դրութիւն. — Տակաւ պակսելու վրայ է
անոնց քով, որ վարագուրի ետեւ կը գոր-
ծեն:

Դողութիւն. — Արդի ըմբռնումով, առեւ-
տուրի մէջ ներելի, իսկ գիշերն աններելի:

Դրկախառնութիւն. — Պարողներու ամուս-
նութիւն... առանց քահանայի:

Դրաւ. — Երկու պատուաւոր մարդոց մի-
ջեւ իրաւ, իսկ երկու դիմախառններու մի-
ջեւ ան-իրաւ:

Դովես. — Բ. Թերթին բաժանորդ ա-
ռաջնորդին իրաւունքը:

Դագաղ. — Անդիի աշխարհ տանող ան-
անիւ կառք մը, որոյ անդրուարն երկոտա-
նի է:

Դիակ. — Ծոյլ մարդու մը արձանը:

Դիմակ. — Երեսին ակնոցը, որոյ ապակին
կաշեղէն է:

Արsolianstkr. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրու

800 լիտրադիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընթացեալն ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը : Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, լսեալն ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը : 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղջ : Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի տնօրէնութեան :

Գրատուն Մարգարեան

Հաստատեալ 1805ին

Պատիւ ունի ծանուցանել այն բոլոր կրթական հաստատութեանց որք դործակալութեանց հետ ու է շահագրտական պայմանագրութեաններ չեն կնքած, քչելոր համար անոնց դրքերը միայն, թէ պատրաստ է իրեն սեփական գիրքերը, որք մանկավարժական այժմու ընտրելագոյն ու դիւրուսոյց մեթոտներսուն համաձայն պատրաստուած են, թղթատարի ծախքն իր վրայ ըլլալով՝ Պոլսոյ դնով զրկել ո՛ւր որ ալ ըլլայ : Յետագայ ցանկին մէջ նշանակուած են գրատանս սեփական դասագիրքերը, իրենց անունովն ու գնով :

Դործ . Քերականութիւն Ֆրանս . լեզուի

Գին 7 Ղր.

Ո՛վ որ կը փափաքի հմտանալ ֆրանս. քերականութեան բոլոր նորութիւններուն, կրնայ վստահաբար առնել Պօղոսեան Ֆրանս. Քերականութիւնը, որ պատրաստուած է Լառուսի, Կէրարի, Լարիվիէ Պոաշէի քերականութեանց հետեւողութեամբ, և բազմապիսի հրահանգներով ճոխացած :

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով : Կեդրոնատեղին է Հանրագիտակի Տնօրէնութեան քով :

Հետեւեալ գրքերուն համար դիմել միմիայն
ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց, բիւ 57

ՆՈՐ ՈՃՈՎ ԴԱՄԱՆԱՆ ԳՐՔԵՐ

Մեծախմբակ միջ պատրաստ

ՄԱՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ կամ ՀԱՐՊԻԿ ՔԵՐԱԿԱՆ, Պատկերազարդ, բոլորովն նոր ոճով : Հատը 5 փարս :

ՄԱՐԳԱՐԵԱՆԻ, Մանկագրութեան ֆրանս. քերականութեան համար, Կուսուցանէ կարգալ. գրելի գծել, կը բովանդակէ երգեր, խաղեր, տառիչներ եւ հանելուկներ : Գին 50 փարս :

ՍԻՐՈՒՆ ԶՐՈՍԱԿԱՆ, Մանկանց երկրորդ գիրքը կը պարտաւորէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առակներ, բարբառներ փոքրիկ պատմութիւններ եւ առածներ : Թ.տպ. Գին 2 ղր2 :

ՍՍԿԵՄԱՏԵՆԻԿ Հայ տղայոց, Երրորդ գիրք ընթերցանութեան Ե. Յարգրութիւն 120 պատկերներով : Կը բովանդակէ բարդական գեղեցիկ պատմութիւններ, ստանաւորներ, երգեր, առակներ, կրօնական ու գիտական ամենակարեւոր գիտելիքներ, եւն. Գիրք մը տրամադրուած է և պիտանի ամէն Հայ տղայ : Գին 4 ղր2 :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ . մասն և . Գին լաթակազմի 50 փարս :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ . մասն Բ. Կուսուցանէ իր անման ոճով քերականութեան Ութ ՄԱՍՈՒՆՔ բանին 100 միտ եւ փոքր գեղեցիկ պատկերներով : Գին լաթակազմի 100 փարս :

ՍՐՐԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Տիւ եւնոր կուսարածի, 100 փր : ԳԵՂԵՑԻԿ ԶՐՈՍԱԿԱՆ, Տառադար տղոց կամ վարժարանի համար : Գին 3 ղր2 :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ, Մանկագրութեան ֆրանս. քերականութեան եւ բովանդակ, ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, առաջագահական եւ բովանդակ, տրանց, կանանց եւ փոքր տղայոց, առանց գործերի : Գին 4 ղր2 :

ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՈՒԿԱՆ ԿԱՐԺԱԿԱՆ ԳՐԱՐԱՐԻ, ՈՒՊԵՐԵՆԻՍԻՆԻ ԳՐԱԿԱՆ, Եւ պատմական արեւմտ. Գին 4 ղր2 :

Գին 4 Դանեկան



ՌՕՍԻԱ. — ROSSIA



Ա. Պ. Ա. Հ. Ո. Վ. Ա. Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն. Ը. Ն. Կ. Ե. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

ԴՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՅՔ

1898 թվականի մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք
Երայխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մախասան հին սեղը

Ընդհ. Բենիս
Ա. ՀԻՒՐՄԻՐԻՉ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷՐԲԷՆ

Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆԿ



1898/ին Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15% ՄԻԼԻՈՆ ֆրանք չահարածին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՑԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնէ]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ գործառնութիւն ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ պահեստի գրամ ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ շահարածին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԹԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻԷՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ.:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՔ

ԼՆՏՈՆ

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրեթէ Լիոնէ

Անգղիոյ պանքա

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԲԻՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒՈՒՍՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաշտէ Գարու, Անանիատի Խան